

ԱՌԱՋԻՆ
ՏԱՐԻ

ՇԱԽԻԻՂ

ԱՌԱՋԻՆ
ՏԱՐԻ

ԱՋԻԱՅԻՆ՝ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱԹԱԹԵՐԹ

«ՇԱԽԻԻՂ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱԽԻԻՂ» Տարեկան գիրք 10 դրան, կէս տարուանը 6 դրան: Առանձին «ՇԱԽԻԻՂ» խմբագրութիւնը բաց է առաւօտեային 8—4 ժամ: Կարող է համարները 5 շահի. Արտատպանութիւն տարեկան 8 ֆրանկ կամ 3 րուբլի, եւ տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւնը ընդունուած է ամսն կէս տարուանը 5 ֆր. կամ 2 րուբլի: Թէ հրատարակուած գրութիւնն միմիայն չ'ընդունուի: Յայտարարութիւնները համար վճարուած են իւրաքանչիւր բառին խմբագրատան մէջ: Մեր հասցեն, Téhéran. Rédaction CHAVIGH.

1 շահի:

ԲՈՎԱՆԴԱՊՈՒԹԻՒՆ

Մեր հաստատութեանց անկախութիւնը.— Ներքին ՏԵՍՆՈՒԹԻՒՆ. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՐԻՆ ՏԵՍՆՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.— ՀՅՈՒԱԿԱՆՆԵՐ. ՀԱՅԱՍՏԱՆԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՄԵՐ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆՑ ԱՆԿԱՑՈՒՆՈՒԹԻՒՆԸ

Երբ մարդ տեսնում է թէ քնն զիւրութեամբ մեջ մէջ ամեն օր երեւան են գալիս նորանոր հասարակութիւններ, և որքան աւելի զիւրութեամբ կործանւում են ամուլ առ ամուլ ինքն իրան չը հարցնել, թէ քնն է այս անկախութեան գաղտնիքը: Մենք կաշխատենք մի քանի բազմաբաժնի ընկերութիւն:

Երեւակայեցէք մի ընկերութիւն որ կազմուած է օրինակի համար մի օրեկիցէ քաղաքի մէջ մի ուսումնարանի բանալու համար: Առաջին տարին ամեն քան լաւ է ջերմ եռանդ կալաւ առեւելոյց մի լարգանք կալ գէպի նորակազմ կանոնադրութիւնը, բնորոշութիւնները լինողով են գաղտնի քուէարկութեամբ, բնորոշ են մասնաժողով ատենապետ ատենադիր, խորհրդական ամենայն ձեւակառուութեամբ, ճանաչել են ասում որով քուէարկ է նոր բացւող լուսաւորութեան գարադարից, միութիւն, յարասեւութիւն, յառաջագիծութիւնները լինողով քուէարկ օրը հազար անգամ կրկնւում են և մարդ իրան մտածում է որ մի նոր կեանք է սկսել:

Մենք է կենում մէկ երկու տարի, այդ ժամանակահատից ընթացքում կապւում են անսպասելի քուէ երկու կուսակցութիւն, մեծ բան հարկաւոր չէ իրիւն պատրուակ ծառայելու համար, նախ վեճ կը լարուցանեն ձեռնարկ մասին, գտնելով որ նա բան չէ սովորեցնում, եթէ այդ չեղաւ, վարժարանի շինութեան մասին վեճ կը

սարքեն, եթէ այդ էլ չեղաւ—կը գտնեն, որ հոգաբարձուներից մէկը աղայաբար է վարչում միւսների հետ:

Անմիջապէս ասուիսը կը սկսի, առաջին գանգատողը իւր հրաժարակաւ կը տայ ընկերութիւնից, որպէս թէ այնուհետ իւր համար ալիս անպատուութիւն էր այդպիսի ընկերութեան անդամակից լինել, (գուք հօ գիտէք մենք որչափ դժուարապահանք ենք պատուի կողմից) Եթէ հրաժարուողը ազգայնիկ մարդ է, կ'երթայ կը գտնէ իւր խնամքներին, եթէ մի որոշ զերք տնի, իւր խնկարկուններին, գործակատարներին, և կը սկսի լարձակուիլ նորահաստատ վարժարանի դէմ նոյնչափ եռանդով, ինչ եմ ասում, հազար անգամ աւելի մեծ եռանդով քան որքան գործ է զբաղւում երկու տարի առաջ այդ վարժարանի շինելու համար: Հրաժարուողին ամենից առաջ կը հետեւէ իւր խնամքն ազգայնիկը, յետոյ բարեկամը, յետոյ ընկերը, յետոյ գործակատարը և կը կազմուի մի փոքրիկ հակառակող խմբակ: Այս խմբակը այն օրհնեալ սերմն է, որ մի օր աճելու է ծառ է դառնալու, ճիւղեր է նրձակելու և պտուղներ է տալու:

Երկն այս միւս այն ժողովը կամ գործող մարմինը մի սխալ կը գործէ, կամ մէկ նոր անդամակցի հետ անհամաձայն կը լինի, և ահա գործիչները մէջից մէկ նորը այդ բանը վնասելու կը գտնէ, և անմիջապէս նա էլ կը հրաժարուի և կը միանայ իւր բոլոր արեւիքակներով այն առաջին հրաժարուողի խմբին, ոչ թէ գաղափարակից լինելով, համար. ոչ երբէք, այլ, որովհետեւ պէտք է միանալ հասարակաց թշնամու դէմ. հարաբարակաց թշնամին միշտ գործող մարմինն է:

Երբ չորս տարի կանցնէ, և ահա հակառակող մարմինը աւելի ստուար է,

աւելի ուժեղ է, քան գործողը: Մի քանի տարի ամուլ հակառակութիւնից յետոյ, նոր մարմինը կը սկսի մէկ նոր վարժարան բաց անել, հակառակողի դերին նա այժմ անց է կենում գործողի դերին. նոր կանոնադրութիւն, նոր ժողովներ, նոր հոգաբարձութիւն, զառք թողութիւն:

Այդ միջոցին հին իւրմբը, հին ժողովարանը կամ քաղաքացի է, կամ մի քանի հոգն նախկին խմբից, գեա շարժականութիւն շատ լուրջ կերպով քննարկուած: Նոր վարժարանը առաջին տարին աչքի կ'ընկնի իւր գործողների եռանդով, նորերը մէկ կը գործեն, հինգ կը շարախօսեն հին վերայի հին ընկերութիւնից անդամները կը կորզեն, հին վարժարանից անդամները կը հանեն կը բերեն նորը և մէկ խզաբով հին բեկորներով կը կազմեն նորը:

Բայց քնն է ք տեսնում, չէ անցնում երեք տարի ահա տրտալնները սկսում են նորի դէմ, առաջին գաղափարողը իւր հրաժարականն է տալիս, հին արուքուածը նորից է սկսում, որովհետեւ հակառակութեան այդ բազմաբաժնի միութեան էին, ոչ թէ մի որեւէ անդամից կամ համապաշարակցութեան համար, այլ լսել հակառակութեան, և ահա մի նոր հերձուած, հրաժարականները միմեանց յաջորդում են քմինչև կազմւում է երրորդ խմբից:

Եւ այսպէս հեռահեռ ամեն մի խումբ դառնում է մի անմիութեան, հակառակութեան հոգ. հինը քանդել թող չիկել, ահա ամեն մէկ խմբի ըսկընները, և այսպէս շարունակում է ազդել . . . պառակտումների բաժանուիլ!!! Իսկ ամեն մէկը այդ խորտակիչներից, երբոր հանդիպում է միւսին սրտից մի խոր ախ է քաշում և ասում է

ափսոս, մեր ազգը անմիաբան է, ինչ լաւ կը լինէր որ մի քանի անպիտան մարդիկ չը լինէին, և ամենքս միացած լինէինք:

Այժմ հարցնում ենք ով է յանցաւորը այս բոլոր գայթակղութեան մէջ. մենք կ'ասենք, առաջին հրաժարուողը: Առաջին հրաժարուողը՝ առաջին հարուածը զարկում է ընկերական շէնքը խորտակելու: Առաջին հրաժարուողը՝ պաշտօնէն եղծանողն է լինում այն բնական իրաւունքի, որի վերայ հաստատւած է ամբողջ մարդկային ընկերութիւնը, այն է մեծամասնութեան օրէնքը: Ամեն ընկերութեան կանոնադրութիւնը վճռում է իր և իր խնդիր պէտք է կարգադրուի մեծամասնութեամբ: Եթէ այդ իրաւունք է տալիս փոքրամասնութեան հրաժարուիլ ընկերութիւնից: Մի՞թէ այդ տեսակ տարերքից կազմուած մի ընկերութիւն հէնց առաջին ծրից դատապարտուած չէ քայքայուելու:

Ինչո՞ւ հրաժարուիլ: Եթէ մի օք ընկերներէից անհուն է որ իւր ընկերակիցները սխալ շաւղի են հետեւում, նա ոչ թէ պէտք է հրաժարուի ընկերութիւնից, այլ պէտք է մնայ նորա մէջ պէտք է շարունակէ տարածել իւր գաղափարը և գոյացնել մեծամասնութիւն, եթէ համոզուած է որ իրաւունքը իւր կողմն է, հակառակ դէպքում, պէտք է տեղի տայ մեծամասնութեան առաջ:

Ինչո՞ւ հրաժարուիլ: Մի՞թէ պէտք է զոհել ամբողջը մէկ կէտի համար, մի՞թէ պէտք է քանդել մի հաստատութիւն, որովհետեւ նորա ժողովը մէկ անգամ մէկ սխալ վճիռ է տուել: Եթէ եղբորդ մէկ աչքը շիւ է, մի՞թէ դուրս համար հարկաւոր է նորան սպանել: Արկնում ենք, մինչև մեր հասարակութեան մէջ ամեն փոքրամասնութիւն չը սովորէ տեղի տալ մեծամասնութեան առաջ, և շարունակել օգնել նորան, նոյն իսկ երբ գաղափարակից չէ նորա հետ, մինչև ամեն օք իւր գլխի մէջ լաւ չը տեղաւորէ այն միտքը որ առանց գիշողութեան ընկերական որ և է շէնք անկարող է կանգուն մնալ, մեր հասարակութիւնը կը շարունակէ դիմել ոչ թէ շէնքից շէնք, այլ աւերակից աւերակ, և սերունդներ կը գան կ'անցնեն ոչ թէ արդիւնք թողնելով, այլ միմեանց շինածը քանդելով:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

(շարունակութիւն և վերջ)

Մի խուբ պարոններ որոնց մէջ կան ուսեալ և բարձր պաշտօնի տէր անձինք, Հայկազեան ուսումնարանի ներքին կազմակերպութեան մէջ, թերութիւններ տեսնելով և վերաբերելով այս, ներկայ կառավարչայ անյարմարութեան իւրեանց ձեռք առած պաշտօնի մէջ, և միջոց չունենալով իրանց ցանկացածի համեմատ փոփոխութիւններ ձգել ուսումնարանի մէջ, վերջերումս ձեռնարկում են մի նոր ուսումնարան բանալ, որը աւելի, բաւարարացուցիչ կազմակերպութեան վերածուած լինի:

Այս թերութիւնների ստուգութիւնը գտնելու համար, մի քանի օր առաջ ես հոգաբարձութեան բարի արտօնութիւնը խնդրելով այցելեցի, ուսումնարանը: Տեղայոց բաժինը՝ առայժմ կազմուած է երեք նախակրթարաններից և երկու բարձր դասարաններից. նշանակում է որ մի աշակերտ կարող է հինգ տարի յաճախել այս ուսումնարանը մտաւոր սնունդ ստանալու համար: Օրինակաց բաժինը՝ ունի երկու դասարան. այսպէս երկու բաժինները միասին ունին 7 դասարան: Այս 7 դասարանի դիմացը ինչ ուսուցիչներ ունենք—հինգ: Ուսուցիչների պակասութիւնը պատճառում է անկանոն նախակրթարանական դասեր, և այս բնական է: Ուսումնարանի հոգաբարձուները փորձել են և փորձում են իրանց յանձնուած ուսումնարանը վերածել ամենանոր մեթոդի և ըստ կարելոյն յաջողել են բարձր դասարանների մէջ բայց երեւի իրանց մտքից չի անցել որ այս նոր մեթոդը միայն մեծ նշանակութիւն ունի նախակրթարանների համար. նախակրթարանի ամեն մի դասարանը պէտք է ունենայ իւր առանձին մանկավարժը՝ որը պէտք է պարապուի միայն իրան յանձնուած աշակերտների հետ: Բայց Հայկազեան ուսումնարանի այցելու ինչ է գտնում: Նա գտնում է մի սենեակի մէջ երեք նախակրթարանական դասեր և առաջին դասը, և մի բան որ նորան շատ զարմացնում է այս է որ ճշմարտապէս չորս դասերը ունեն միայն մի ուսուցիչ, առաջին քանի ժամերում, նշանակում է որ նախակրթարանական դասերը պէտք է անդործ նստեն քանի ժամեր (ուսուցիչների խօսքով 4 ժամ յետ և առաջ) և կամ խոնգարեն առաջին դասը կամ բուռն պէս նստեն մի և նոյն

դասարանում և մի կէտի վերայ նայեն մինչև մի ուսուցիչ գայ իրենց պարապեցնելու, ինչո՞ւ չեն արձակում նախակրթարանները այն ժամերում, երբ նոքա չեն գործում և ինչ կը նշանակէ երեք նախակրթարան ունենալ և ամէն մէկին 40 ընդէ միայն պարապեցնել օրական, թողնում եմ կառավարչաց բացատրութեանը եթէ բանաւոր պատճառ կարող են տալ:

Այս ամենամեծ պակասութիւնն է որ ես գտայ ուսումնարանի կազմակերպութեան մէջ քանզի նախակրթարաններում են մտաւոր զարգացման հիմքերը դրւում և եթէ սոքա անկանոն դրութեան մէջ են, ուրեմն ինչ ճշմարտ զարգացում ենք կարող սպասել բարձր դասարաններից:

Փոքր էլ նայենք ուսումնարանի բարձր դասարաններին, բնակրցող տեղաւոր նախակրթարանները բաւարարացուցիչ չեն. ուրեմն ինչ կը նշանակէ ծանրաբեռնել հէնց առաջին դասարանի աշակերտներին:

Մի աշակերտ որ երեք տարի շնորհանով ավարտ նստել է գրասեղանի վերայ առանց կանոնաւորապէս զբաղեցնելու իւր ուղիղը, արդեօք կրնո՞ղ է սկսել սովորել և մի անգամից պարսկերէն, ֆրանսերէն, ռուսերէն, բնական շոտլանդերէն, հայոց պատմութիւն և այն բոլոր ուրիշ առարկաները, որոնք հասարակորէն աշակերտ սովորում ուսումնարաններում, սորանով չեմ ուզել ասել որ մի աշակերտի համար որ երեք տարի կանոնաւոր ուսում է ստացել, այս առարկաները շատ են. այլ թէ այս տեսակ նախակրթարանների ունեցող ուսում արանք չի կարող տալ մօտաւորապէս վնասելու աշակերտին, պարտմելորիցն է նորան սովորել վերոյիշեալ առարկաները:

Նայելով ներկայ ուսուցիչներին և իւրեանց սովորեցնելու մեթոդներին պիտի խոստովանուիմ որ այնքան յարմար են և բաւարարացուցիչ, որչափ ցանկալի էր:

Ընթերցողը տեսնու որ ուսումնարանի հսկառակ կուսակցութիւնը մասամբ ճշմարտութեան վերայ է հիմնուած: Այժմ տեսնենք ուսումնարանի կառավարիչներն ինչ ունին անելու իրանց արդարացնելու համար:

Նոքա ոչ թէ միայն տեսնում են այս թերութիւնները, այլ խոստովանում են այնպիսի անձանց մօտ որոնք կարող են ժողովրդի մէջ տարածել նրանց, որինակ իմ դէպքում, 'Էրեւանը արդարեւ չեւա՞մար կառավարիչներն ասում են որ բաւականացուի գումար չունեն որո՞ւ հարողանան ռեփը ուսուցիչներ կարծիք և այդպիսով ուսումնարանի արտաքին վերջին, նորանք էլ այս կերպով են յուսաւորաբար նստում, ուրեմն, իսկ մեղաւորը ով է. կը սխալուիմ տեսնելով որ կուսակցութեան երկու մասը հետ մեղաւորելի են. բնական է որ երբ տալիս անգամ պահամայնութիւն ծագեց, պատուէր դիւրող խօսքեր փոխանակուեցին և այսպիսով փոխարէն միմեանց հետ համաձայնութիւն գոյացնել, իւրեանց պիտոյութեան խօսքերով օգնեցին աւելի անջատուելու. և այժմ այնչափ անջատուած են որ կարծես մի վիճակայ նոցա ո՞չ: Արդեօք չի կարելի այս վիճակը և միտքնել նորանց: Ուսումնարանի հսկառակ

Յ. Մ.

Հ. Գ. Կ. (Ջաղախ) կորուստն 00¹₂, ոչ: Մի մոռա-
նայ-APROPOS-ստացիր Մ.